ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

<< ՎՊ-ԳՀԾՁԲ-03/17 >> ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան <<08 >> հունվարի 2018թ., ժամը 12:00

Մասնակցում էին՝

Գևորգ Վարդանյան	–Արարողակարգի և փաստաթղթաշրջանառության վարչության պետի պետ	ԳՊ/ԳԱՊ
Հարությունյան Լևոն	- Իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ	ԳՊ/ԳԱ
Բեդիրյան Ծովինար	-Ֆինանսատնտեսական և հաշվապահական հաշվառման վարչության գլխավոր մասնագետ	ԳՊ/ԳԱ
Պետրոսյան Նաիրա	-Արարողակարգի և փաստաթղթաշրջանառության վարչության պետի տեղակալ	ԳՊ/ԲԱ
Զոհրաբյան Գոհար	-Ֆինանսատնտեսական և հաշվապահական հաշվառման վարչության պետի տեղակալ	ԳՊ/ԲԱ

Հանձնաժողովի քարտուղար Աննա Անանյան

Օրակարգ
Հայտերի գնահատման մասին

1.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

1.1 Մ ԲԻ Ռ ՍՊԸ-ի հայտով ներկայացված գնային առաջարկում մասնակիցը հղում տալով ՀՀ ՖՆ նախարարի 07.07.2014թ. պաշտոնական պարզաբանմանը նշել է, որ ԱԱՀ-ն հաշվարկվել է միայն ծառայությունների ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի հանրագումարի նկատմամբ, սակայն գնային առաջարկով ԱԱՀ-ն հաշվարկվել է մատուցվող ծառայությունների և այդ ծառայությունների ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի հանրագումարի նկատմամբ:

1.2.1 Ֆլեշ Մոտորս ՍՊԸ-ի հայտով ներկայացված գնացուցակում 3 տողերի մասով գին չի առաջարկվել, ինչպես նաև գնային առաջարկում և գնացուցակում կան թվաբանական անճշտություններ:
1.2.2 Հիմք ընդունելով Ֆլեշ Մոտորս ՍՊԸ-ի հայտով ներկայացված գնային առաջարկի տառերով գրված գինը՝ գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ հայտի ապահովման չափը պակաս է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսից:

2. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

2.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. Մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգը ՝ Մ Բի Ռ ՍՊԸ-ի և Ֆլեշ Մոտորս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը մերժել:

2.2. Հիմք ընդունելով "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը ՎՊ-ԳՀԾՁԲ-03/17 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Գևորգ Վարդանյան		ԳՊ/ԳԱՊ
Հարությունյան Լևոն		ԳՊ/ԳԱ
Բեդիրյան Ծովինար		ԳՊ/ԳԱ
Նաիրա Պետրոսյան		ԳՊ/ԲԱ
Զոհրաբյան Գոհար		ԳՊ/ԲԱ

Հանձնաժողովի քարտուղար _____ Աննա Անանյան